

ցնէ՝ սէր և հետաքրքրութիւն, իսկ երբ ամբողջ եկեղեցին կը ներկայացնէ մի հզօր երգեցիկ խումբ (хоръ), այն ժամանակ կվերանայ ձանձրոյթը, կը ոգևորէ, կը արձարցնէ կրօնական օգին, կենդանացնէ եկեղեցական կեանքը և հնարաւոր կգարձնէ «ի մի սիրտ և ի մի քերան փառաբանել Աստուծուն»:

Перк. Вѣст. № 17.

Ս. Յարութեան.

† Կ. Պ. ՊՈՐԵԴՈՆՈՍՅԵԻ

Եկեղեցական գործերից հեռի (1905-ի հոկտեմբերի 19-ից յետոյ), մոռացուած իւր նախկին երկրպագուներից, արհամարհուած իւր բարերարութեանց, ծաղրուած լրագրութեան կողմից, ամբողջ կողմից հայհոյուած՝ խաղաղ մեռաւ մարտի 10-ին 80 տարեկան հասակում Կոստանդին Պետրովիչ Պորեդոնոսցեւը: հմուտ իրաւագէտ, աղանդաւոր դրիշ, առաջնակարգ գիտնական և յայտնի եկեղեցապետական գործիչ:

Կ. Պ. Պորեդոնոսցեւը Աղեքսանդր Գ. կայսեր ամենից աչքի ընկնող գործակիցն էր, որ ներքին քաղաքականութեան մէջ մասընց «հաստատուն ռուս ուղղութիւն» և իւր կնիքը դրել էր պետական կեանքի զանազան կողմերի վերայ: Իւր եկեղեցական գործիչ՝ բարձրացուց արտաքին եկեղեցականութեան նշանակութիւնը, նուիրապետութեան և կետրոնական հոգևոր վարչութեան հեղինակութիւնը մեծացուց, զօրեղացուց գիտնական վասականութեան նշանակութիւնը, եկեղեցական դասին յանձնեց սկզբնական կրթութեան գործը, հոգևորականութեան վիճակը բարելաւեց և աստուածաբանական գիտութեան մշակումը կենդանացուց:

Ծննդեամբ Մոսկովցի, կրթութեամբ Նիկոլայի շրջանի, ուլաւեանաֆիլ (ռուսոսէր) հակումներով՝ Պորեդոնոսցեւը շատ վաղ իւրացուց նեղ Մոսկուացու քաղաքական սկզբունքները, հիմնուած մայրենի երկրի հայրենասիրական գերակայացման վերայ:

Նորա սկզբունքն էր՝ «հին ազգային եկեղեցին միացեալ ընդ նախնի ռուս պետութեան»:

Արհամարհանքով վերաբերուում էր պատմական գիտութեան ճիշտ հետևութիւններին, որ վերաբերում են հանրամարդկային զարգացման օրէնքներին. նա ադոնց տեղ իւրն էր գնում, որ ստեղծել էր հայրենասիրական յափշտակութեամբ:

Նա համադրուած էր, որ Ռուսաստանի բարօրութեան համար պիտի կենդանացնել «Մոսկուայի Ռուսը», ուստի չէր հաւատում, թէ Ռուսաստանը բաղդաւոր կլինի՝ առանց անսահման ինքնակալութեան, առանց Մոսկովեան ուղղափառութեան՝ դաւանանքի, տպագրութեան, խօսքի և անձի ազատութեամբ և երեցփոխանակեան կառավարութեամբ: Մոլեռանդութեամբ նա ճշգնում էր դարձնել Ռուսաստանը ժէ՝ դարու Մոսկուայի կառավարութեան եղանակին:

Բազմի բերմամբ եկեղեցական վարչութեան գլուխ հաստատուած՝ նա երազում էր եկեղեցու ձեռքով վերակրթել ռուս ժողովուրդը զիտակից պահպանողականութեան մէջ. Պոքեդանոսցեի ծրագրով եկեղեցական դպրոցները աստիճան առ աստիճան դուրս ձգելով աշխարհական դպրոցները՝ պիտի պահպանէին և աճեցնէին ժողովրդի մէջ հին կրօնա-բաղաքական հայեացքը: Հոգեւոր զիտութիւնը պիտի թողնէր արեւմուտքի հետ ունեցած կապերը և պիտի ծառայէր վարչական հաւատալիքներին: Եկեղեցական դրաքննութիւնը պիտի հսկէր, որ հասարակութեան զիտութեան մէջ չթափանցէր ոչինչ, որ կարող է խանդարել վերոյիշեալ հաւատալիքները և մտցնել ազատ մտածողութեան նշոյլն անդամ: Այս ծրագրին պիտի օգնէր նուիրապետական իշխանութեան կետրոնացումը, շաղկապուած պետութեան հետ և ջնկուած ժողովրդից: Հոգեւորականութեան գօրանալը համարում էր պետական ու ժի աղբիւր:

Քսանեհինգամեայ նրա դատախազութիւնը մի յամառ փորձ էր, և ուղում էր եկեղեցա-պետական այս հայեացքը իրականացնել, որով ոպանեց կենդանի եկեղեցու դադարաւոր և ճշմարիտ քրիստոնէական բարեպաշտութիւնը:

Ծանր էր պետական խնամարկութիւնը և հսկողութիւնը եկեղեցու վերայ. քանի որ աստիճանում էր եկեղեցա-պետական շահերի կետրոնացումը, այնքան ժողովրդի հոգու խորքում էլ յարութիւն էր առնում եկեղեցու ինքնավարութիւնը: Անողորմաւորապէս վերջ ի վերջոյ ստիպեց Կ. Պ. Պաքեդանոսցեին տիանատես լինել այն հետեւանքներին, որ նա չէր նկատում և որոց դէմ նա այնպէս երկար և յամառ կռիւ էր մղում:

Պետական կետրոնացման ջերմ երկրպագու, ոյժը և իշխանութիւնը աստուածացնող՝ նա հարկադրուած էր իւր կեանքի արեւմուտքին նկատել անսնց տկարանալը և տեղի տալը դանադան ինքնավարութեան և ժողովրդի ներկայացուցչութեան:

Կրօնաւորներին և առաջնորդներին հովանաւորող՝ Կ. Պ. ստիպուած էր տեսնել անհեռատես ջանքի ապաշնորհ հետեւանքնե-

ըրէ Կրօնական համընդհանուրութեան թշնամի՝ որը համարում էր անտարբերութեան հաւասար, Կ. Պ. ստիպուած էր տեսնել դաւանանքի ազատութեանց հաւանութիւն նուիրապետութեան ներկայացուցիչներին կողմից: Պետական կրօնի տեսութեան երկրպագու և պետութեան ու եկեղեցու հակառակութիւնից վախեցող՝ նա ապրեց մինչև այդ հակառակութեանց սկիզբը: Կատաղի հակառակորդ տպագրութեան և խօսքի ազատութեան՝ ականատես եղաւ գրաքննութեան ոչնչացմանը, պաշտպան եկեղեցական դպրոցներին՝ նա ինքը նկատեց ընդհանուր ժողովրդական կրթութեան ծրագրի մերձենալը:

Վերջապէս նրան բաժին ընկաւ լուռ վկայ լինել եկեղեցական կեանքի վերափոխութեան, որ կարծում էր թէ սուրբ է և հաճադատ ժողովրդի հոգուն իւր ամէն մի հնչիւնով, ամէն մի բառով և գոյութեան ամէն մի աննշան գծով:

Ս. Յարութիւնեան.

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Կաթոլիկական համալսարան Տոկիոյում. Միկազոն թոյլ է տուել Տոկիոյում կաթոլիկական մի համալսարան հիմնել: Եզուիականների հակողութեան տակ, ակադեմիական առանձին արտօնութիւններով: Համալսարանի ուսուցչապետները Անգլիացի, Իրլանդացի և Ամերիկացի եզուիտներ են: Բացի համալսարանից Միկազոն թոյլ է տուել իւր մայրաքաղաքում նաև կաթոլիկական եկեղեցի շինել:

Կաթոլիկ եկեղեցիներ երեք տարի առաջ տօնեց արևմտեան մեծ եպիսկոպոսին՝ Գրիգոր Ա. Պապի 1300-ամեայ յօբելեանը, այժմ էլ պատրաստուում է տօնել արևելեան եկեղեցու մեծ լուսաւորչի ս. Յովհան Ոսկեբերանի (մեռած 400-ի սեպ. 14-ին):

Տօնախմբութիւնը կկատարուի նոյեմբերի 13-ին: Այդ օրը հանդիսաւոր պատարագ կմատուցուի ս. Պօղոս Պետրոսի տաճարի ս. Պետրոսի սեղանի վերայ ի պատիւ սրբին: Կարծում են, որ Պիոս Ժ-րդ պապը այդ առթիւ շրջաբերական կուղարկէ արևելեան եկեղեցիներին:

Հռովմում կազմակերպուում է մի կարգ ընթերցմութեան ս. Յովհան Ոսկեբերանի կեանքի և գործունէութեան վերաբերեալ: Մտածում են մեծ ուխտադնացութիւն սարքել դէպի Հռովմ յոյն միաբարները: